ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 92 -Ա
« 07 » ՄԱՐՏԻ 2024Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՇԵՐԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 1550-Լ որոշման 9-րդ հավելվածի 19-րդ և 21-րդ կետերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի պահպանությունը կազմակերպել պահակային ծառայությանը արտապատվիրակելու գործընթացի միջոցով: Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարողին՝ կազմակերպել գործընթացից բխող իրավակարգավորումները և աշխատանքները:
2. Մարզպետի աշխատակազմի շենքի պահպանությունը պահակային ծառայության միջոցով կազմակերպելուց հետո հաստիքացուցակից կրճատել գիշերապահների հաստիքները:
3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. ԵՂԵԳՆԱԾՈՐ